

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՈՒ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԷՆԵՐՈՒ ԵՒ ՏԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ

Ա.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՍԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՈՒԼ

ՊԱՏՐԻԱՐԷ Կ.ՊՈԼՍՈՅ (1554—1634)

Յովհաննէս Վ. Կ. Պոլսեցի, Խուլ մականուանեալ, Պատրիարք Կ. Պոլսոյ, ցայսօր անծանօթ մնացած անձ մըն էր: Չամչեան միայն անունը կը յիշատակէ՝ իբրև Պատրիարք Կ. Պոլսոյ (Գ. էջ 535, եւ Յուցակ Պատրիարքաց Կ. Պոլսոյ): Ասկէ աւելի բան չի գիտեր Հ. Ասատուր՝ Կ. Պոլսոյ հայ Պատրիարքաց Պատմութեան մէջ նշանակելու (Ընդ. Օր. 1901, էջ 87—93), բայց միայն՝ թէ Յովհ. Խուլ 1600—1, 1610—11, 1621—3, 1631—36՝ չորս անգամ կարճատեւ պատրիարքութիւն ունեցած ըլլայ, որ սակայն ամբողջապէս ճիշդ չէ: Նոյնպէս կը սխալի Վանքեան Եպ., որ կը գրէ («Բիւզանդիոն», 1906, թ. 3119) «Յովհ. Խուլ... 1623ին Գր. Կեսարացի Պատրիարքին կարգադրութեամբ Պրուսայի առաջնորդ կարգուեցաւ եւ չի գիտցուիր թէ որչափ մնաց: